ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018թ. Նոյեմբերի 7-ից դեկտեմբերի 1-ը

Չինաստանի Ժողովրդական Հանրապետության (ք. Պեկին)

Գործուղման արդյունքների վերաբերյալ

1. Անուն, ազգանունը՝

Արման Ավետիսյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Պեկին, 07.11.2018-01.12.2018թ.

4. Հրավիրող կողմը՝

Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարություն

5. Գործուղման նպատակը՝

Մասնակցել "Belt and Road" նախաձեռնության շրջանակներում տնտեսական և առևտրային համագործակցային գոտիների ստեղծման վերաբերյալ» դասընթացին:

6. Քննարկված թեմաները՝

Դասընթացի ընթացքում ներկայացվել և քննարկվել են Չինաստանի Ժողովրդական Հանրապետության տնտեսությունը՝ դրա զարգացման միտումները և հիմնախնդիրները, տնտեսական բարեփոխումներ, ձեռքբերումներ և սոցիալական զարգացումը, պետական կառավարման համակարգում օգտագործվող նոր հասկացությունները, որոնք կիրառվում են Սի Ցզինպինի վարչակազմի ներքո, առևտրի դյուրացումը և Առևտրի Համաշխարհային Կազմակերպության Չինական փորձը, Չինաստանի հատուկ տնտեսական գոտիների զարգացումը, քաղաքականությունը և պլանավորումը, Չինաստանի արտահանման-ներմուծման բանկի աջակցությունը "Belt and Road" տնտեսական և առևտրային գոտիներին:

7.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Կազմակերպվել են այցելություններ Նանջինգ և Ցինդաո քաղաքներ: Ելույթներ են ունեցել Համաշխարհային զարգացման ինստիտուտի պետական խորհրդի զարգացման հետազոտական կենտրոնի ներկայացուցիչ՝ Դինգ Յիֆանը,

Միջազգային բիզնեսի եւ տնտեսագիտության համալսարանի պրոֆեսոր Ջուանգ Ռուինը, Չինաստանի միջազգային առևտրի եւ տնտեսական համագործակցության ակադեմիայի հետազոտող Լիան Յանֆենը, Չինաստանի արտահանման-ներմուծման բանկի ներկայացուցիչներ և այլք:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրվածփաստաթղթերը

Դասընթացի ավարտին Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարության կողմից տրվել է Սերտիֆիկատ՝ դասընթացներին մասնակցելու և հաջողությամբ ավարտելու համար:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Մասնակից երկրների պատվիրակությունները, կարևորելով Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարության նախաձեռնությունը, առաջարկել են պարբերական դարձնել նմանատիպ դասընթացների կազմակերպումը՝ ընդգծելով փորձի փոխանակման անհրաժեշտությունը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը՝

05.12.2018թ.